

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## 1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ 2

- 1.1 ՀՀ կառավարության որոշումներ ----- 2
- 1.2 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ ----- 3

## 2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ 5

- 2.1 Ծրագրեր և կատարողականություն (մաքսային ծառայության մասով) ----- 5
- 2.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների ----- 5
- 2.3 ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների  
վերաբերյալ տվյալներ ----- 6
- 2.4 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ  
վիճակագրական տվյալներ ----- 7

# 1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1 ԶՅ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միացած մասնակիցների մասին հարկային մարմնի կողմից գործատուներին տեղեկացնելու կարգը սահմանելու մասին» ԶՅ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	16.01.2014, N 32-Ն
Յրապարակումը	ԶՅ պաշտոնական տեղեկագիր № 4 (1017), 29.01.2014թ
Ուժի մեջ է	08.02.2014

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միացած մասնակիցների մասին **հարկային մարմնի կողմից գործատուներին տեղեկացնելու կարգը՝** համաձայն հավելվածի:

Փաստաթուղթ	«ԶՅ կառավարության 2012թ. դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԶՅ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	06.02.2014, N 91-Ն
Յրապարակումը	ԶՅ պաշտոնական տեղեկագիր № 7 (1020), 19.02.2014թ
Ուժի մեջ է	28.02.2014

### Համառոտ նկարագիր

Որոշման մեջ կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ, համաձայն որոնց՝ որոշման հավելված N1-ում կատարվել են հետևյալ փոփոխությունները և լրացումները.

**1.** Գործատուն գրանցման հայտ չի ներկայացնում այն անձանց համար, որոնց վերաբերող՝ սույն կարգի 8-րդ կետում նշված (գրանցման հայտում ներառվող) տեղեկատվությունը ԶՅ օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն,

**2.** Գործատուի ներկայացրած անձնավորված հաշվարկում ներառվում են նաև

**ա.)** ամփոփ տեղեկություններ ԶՅ բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վճարված եկամուտների, այդ եկամուտներից պահված եկամտային հարկի վերաբերյալ,

**բ.)** ամփոփ տեղեկություններ՝ կարգի 6-րդ կետում նշված անձանց վճարված եկամուտների, այդ եկամուտներից պահված եկամտային հարկի վերաբերյալ:

**3.** Համաձայն որոշման մեջ կատարված լրացման՝ սույն կարգի 30-րդ կետի 3-7-րդ ենթակետերում նշված տվյալներն անձնավորված չեն ներկայացվում, եթե գործատուի հետ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող (գտնված) անձը ԶՅ բնակության իրավունք (կացության կարգավիճակ)

չունեցող օտարերկրյա քաղաքացի է, քաղաքացիություն չունեցող անձ է կամ նրան վերաբերող՝ սույն կարգի 8-րդ կետում նշված (գրանցման հայտում ներառվող) տեղեկատվությունը ԶՅ օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն:

Որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել տեղեկատվական բազայից պետական մարմիններին և այլ կազմակերպություններին տվյալներ տրամադրելու կարգում (որոշման հավելված N3):



## 1.2 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«ՀՀ պետական եկամուտների նախարարի 2000 թվականի սեպտեմբերի 15-ի N 02/1054 հրամանում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	06.11.2013, N 470-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 3 (482), 01.02.2014թ
Ուժի մեջ է	01.01.2014

### Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատված փոփոխությամբ՝ «ՀՀ կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև համագործակցության վերաբերյալ մարդասիրական և տեխնիկական տնտեսական օգնության վերահսկումը հեշտացնելու մասին» 1992 թվականի դեկտեմբերի 15-ին ստորագրված համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և պարտադիր վճարների արտոնությունների կիրառման հրահանգի մասին» տեղեկանքի երկու բնօրինակը ստանալուց հետո դրանցից մեկ օրինակը ներկայացվում է հաշվառման վայրի հարկային մարմին՝ մինչև **տեղեկանքների**

**ստացման եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:**



Փաստաթուղթ	«ՀՀ ԿԱ ՊԵԿ 2013 թվականի հունվարի 23-ի N 25-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	02.12.2013, N 524-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 3 (482), 01.02.2014թ
Ուժի մեջ է	09.02.2014

### Համառոտ նկարագիր

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 23-ի «Շրջանառության հարկի հաշվարկի ձևը և դրա լրացման կարգը հաստատելու մասին» N25-Ն

հրամանում կատարվել է հետևյալ փոփոխությունը՝ հրամանի հավելվածի «Եկամուտները՝ ըստ գործունեության տեսակների» աղյուսակը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

### «Եկամուտները՝ ըստ գործունեության տեսակների

Գործունեության տեսակը (կոդ)					Տեսակարար կշիռը (%)
բաժին	հատված	խումբ	դաս	ենթադաս	

»:

Փաստաթուղթ	«2014 թվականի հունվարի 1-ից ծխախոտի արտադրանքի հարկման որոշ հարցերի վերաբերյալ» պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	N 9, 12.12.2014
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 3 (482), 01.02.2014թ
Ուժի մեջ է	12.12.2013

### Համառոտ նկարագիր

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (07.10.2010թ. ՀՕ-126-Ն) և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» (07.10.2010թ. ՀՕ-129-Ն) ՀՀ օրենքներն ուժի մեջ են մտնում 2014թ. հունվարի 1-ից և ծխախոտի արտադրանքի ավելացված արժեքի հարկով և ակցիզային հարկով հարկելուն վերաբերող օրենքների դրույթները կիրառվում են.

1) ՀՀ ծխախոտի արտադրանք ներմուծողների կողմից 2014թ. հունվարի 1-ից ներմուծվող և իրացվող ծխախոտի արտադրանքի նկատմամբ,



2) ՀՀ ծխախոտի արտադրանք արտադրողների կողմից արտադրվող և 2014թ. հունվարի 1-ից իրացվող ծխախոտի արտադրանքի նկատմամբ: Ծխախոտի արտադրանք ներմուծողների մոտ՝ 2014թ. հունվարի 1-ի դրությամբ առկա ծխախոտի արտադրանքի ապրանքային մնացորդների իրացման գործարքների մասով ավելացված արժեքի հարկ չի հաշվարկվում և չի վճարվում, և այդ մնացորդների իրացման գործարքների մասով հարկային հաշիվներ դուրս չեն գրվում (ԱԱՀ չի առանձնացվում):

2014թ. հունվարի 1-ից ԱԱՀ-ով հարկվող ծխախոտի արտադրանքի իրացման գործարքների մասով դուրս են գրվում հարկային հաշիվներ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածին համապատասխան:

ՀՀ ծխախոտի արտադրանք ներմուծողները և ՀՀ-ում ծխախոտի արտադրանք արտադրող-իրացնողները 2014թ. հունվարի 1-ից սկսած ձեռքբերումների մասով ավելացված արժեքի հարկի գումարների հաշվանցումները կատարում են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, դեպքում և ժամկետներում:

Փաստաթուղթ	«ՀՀ ԿԱ ՊԵԿ 2013 թվականի օգոստոսի 21-ի N 354-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	30.01.2014, N 28-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 4 (483), 17.02.2014թ
Ուժի մեջ է	26.02.2014

### Համառոտ նկարագիր

Հրամանի համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի օգոստոսի 21-ի «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի համակարգի՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի անցկացման և մրցութային հանձնաժո-



ղովի ձևավորման կարգը հաստատելու մասին» թիվ 354-Ն հրամանով հաստատված հավելվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 51-րդ, 52-րդ և 53-րդ կետերով.

«51. Ընկերության գործադիր մարմնի թափուր պաշտոնում ժամանակավոր պաշտոնակատար նշանակվում է մինչև վեց ամիս ժամկետով:

52. Եթե գործադիր մարմնի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթը համարվում է չկայացած, ապա ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ երեք ամիս ժամկետով:

53. Մինչև սույն կարգին համապատասխան ընկերության գործադիր մարմնի թափուր պաշտոնն զբաղեցնելու մրցույթի արդյունքներով պաշտոնի նշանակումը՝ գործադիր մարմնի թափուր պաշտոնը կարող է ժամանակավորապես զբաղեցնել այն անձը, ով բավարարում է սույն կարգով և այլ իրավական ակտերով գործադիր մարմնի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջներին»:

## 2. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

### 2.1 | Ծրագրեր և կատարողականություն (մաքսային ծառայության մասով)



Ս.թ. հունվարի 29-31-ը Մոսկվայում ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցները մասնակցել են ՀՀ Մաքսային միությանն անդամակցության շրջանակներում աշխատանքային խմբերի հանդիպումներին, որոնց ընթացքում քննարկվել են մաքսային գործի ոլորտում փոխանակման ենթակա նորմատիվաիրավական փաստաթղթերի ցանկը, ՀՀ-ում և Ռուսաստանի Դաշնությունում մաքսային ծառայությունների ներկայացուցչությունների ստեղծմանը վերաբերող հարցեր: Քննարկվել են նաև այն առաջնահերթ խնդիրները, որոնք անհրաժեշտ են ՀՀ մաքսային ծառայության ձևակերպության կառավարման համակարգի և Մաքսային միության ձևակերպության կառավարման համակարգի համատեղելիությունը ապահովելու համար:

Ս.թ. փետրվարի 12-ից 13-ը Բելառուսի Պոլոցկ քաղաքում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Գ.Խաչատրյանը մասնակցել է Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միացյալ կոլեգիայի

10-րդ նիստին, որի ընթացքում քննարկվել են ընդհանուր մաքսային գործընթացների վերահսկողության շրջանակներում մաքսային ծառայությունների միջև տեղեկատվության փոխանակմանը, ֆիզիկական անձանց կողմից ինտերնետ-խանութներում գնված և փոստային առաքումներով տեղափոխվող ապրանքների մաքսային գործարքների կատարելագործման ուղիներին վերաբերող հարցեր, Մաքսային միության պետությունների սահմանների անցումային կետերում պետական վերահսկող մարմինների քանակը կրճատելու ուղղությամբ իրականացվող քայլերը, ինչպես նաև մաքսային համագործակցությանն առնչվող այլ հարցեր: Նիստի ընթացքում որոշում է կայացվել մեր երկրի Մաքսային միությանն անդամակցության ինտեգրման գործընթացների շրջանակներում՝ հաջորդ նիստն անցկացնել Հայաստանում ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակում:

### 2.2 | Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

20.01.2014թ-ից մինչև 20.02.2014թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են թվով 7 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որոնց արդյունքում թվով 13 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

2014 թվականի հունվարի 20-ից մինչև 2014 թվականի փետրվարի 20-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից ընդունվել է 13 որոշում, որից բավարարվել է 3-ը, բավարարվել է մասնակի՝ 1-ը, մերժվել՝ 3-ը, կարճվել՝ 3-ը, կասեցվել՝ 3-ը:



**2.3 | ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ**

Հ/Հ	Ցուցանիշ	Զափման միավոր	2014թ.		
			Հունվար	Հունվար-հունվար	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար - հունվար %)
1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք	մլն դրամ	73,083.0	73,083.0	102.6
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	71,016.1	71,016.1	102.4
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	35,041.1	35,041.1	105.9
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	4,001.4	4,001.4	71.1
1.1.3	Եկամտահարկ	մլն դրամ	-	-	-
1.1.4	Եկամտային հարկ (ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները)	մլն դրամ	19,577.9	19,577.9	111.7
1.1.5	Ակցիզային հարկ	մլն դրամ	2,487.7	2,487.7	110.1
1.1.6	Արտոնագրային վճարներ	մլն դրամ	483.0	483.0	86.4
1.1.7	Շրջանառության հարկ	մլն դրամ	1,572.6	1,572.6	506.1
1.1.8	Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար	մլն դրամ	-	-	-
1.1.9	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճարներ	մլն դրամ	487.7	487.7	55.3
1.1.10	Մաքսատուրք	մլն դրամ	2,808.3	2,808.3	78.0
1.1.11	Այլ հարկային եկամուտներ (Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ գույքահարկը և հողի հարկը (պետական բյուջե հաշվեգրվող), ընթացիկ և անցյալ տարիներից ընթացող օգտագործման պարտադիր վճարները, ճանապարհային վճարները, պարզեցված հարկը, հանրային ծախսերի վճարները, կարգավորման պարտադիր վճարները, ռադիոհաճախակալության օգտագործման թույլատվության տրամադրման և օգտագործման պարտադիր վճարները, «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները (25.1, 25.2, 26, 27, 28, 30, 31 հոդվածների նստույ), ընկերային և ղեկավարի վաճառից հաստատագրված վճարը, ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար, ՀՀ տարածք ներմուծվող ԱՏԳ ԱՎ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օդիների համար քվոտան)	մլն դրամ	4,556.5	4,556.5	82.7
1.2	Պետական տուրք	մլն դրամ	2,066	2,066	111.4
1.3	Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	մլն դրամ	-	-	-
2	Արտաքին առևտրի ապրանքա-շրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	166 598	166 598	101.3
2.1	Արտահանում	մլն դրամ	38 692	38 692	100.6
2.2	Ներմուծում	մլն դրամ	127 906	127 906	101.6

ևս մեկ քայլ՝

**ԲԻԶՆԵՍԻՆ ԸՆԴԱՌԱՅ**

եռամսյա պարբերականությամբ հրատարակվում են «Հարկատու» և «Մաքսատու» ամսագրերը



**2.4 | Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ**

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2014թ. հունվար
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	1273
1.1	Ֆիզիկական անձ	հատ	1030
1.2	Իրավաբանական անձ	հատ	243
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	4 923
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	31
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	89.5
5	Բռնագանձման և սնանկության համար ներկայացված հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	2014թ. հունվար 32
5.1	Բավարարված	հատ	83
5.2	Մերժված	հատ	2
5.3	Զննության ընթացքում գտնվող	հատ	22
6	Բռնագանձման և սնանկության համար ներկայացված հայցերով գանձված գումարներ	մլն դրամ	180,8
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	2155
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	36,4
8	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	338
8.1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	1,071.5
9	ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	4
9.1	ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	40,6
10	ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	285
10.1	Ավարտված	հատ	2
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	2
10.3	Կասեցված	հատ	1
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	101,6

**[www.customs.am](http://www.customs.am)**

**բոլոր հարցերն  
ունեն իրենց  
պատասխանները՝**

**[www.taxservice.am](http://www.taxservice.am)**